Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1595

22
Ս-97

Կ. Պոլիս
1860.

22

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻՆ ՔԱՂՈՒԱԾ

# ԱՍՏՈՒԾԱԲԱՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐՈՒ ԲԱԺՆՈՒԱԾ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՆԱՍԵԱՆ

1860

22
U - 97

22
Ա-97

# ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻՆ

## ՔԱՂՈՒԱԾ

## ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐՈՒ ԲԱԺՆՈՒԱԾ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՄԻՆԱՍԵԱՆ

1860

ճ 9773-ան

2001

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

39336-67

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Աստուած ի՞նչ է։

Աստուած Հոգի է։ Յովհ. Դ. 24։ Աստուած Սէր է։ Ա Յովհ. Դ. 8։ Աստուած լոյս է, ու անոր մէջը բնաւ խաւար չկայ։ Ա Յովհ. Ա. 5։ Մեր Աստուածը մաշող կրակ է։ Եբր. ԺԲ. 29։ Սարսափելի բան է կենդանի Աստուծոյ ձեռքը իյնալը։ Եբր. Ժ. 31։

2. Աստուած ո՞ւր է։

Թէ որ երկինքը ելլեմ, դուն հոն ես. Թէ որ դժոխքը անկողինս ընեմ, ահա՛ դուն հոն ես։ Սաղմ. ՃԼԹ. 8։ Միթէ երկինքը ու երկիրը լեցնողը ես չե՞մ՝ կ՚ըսէ Տէրը։ Երեմ. ԻԳ. 24։ Թէպէտեւ մեր ամէն մէկէն ալ հեռու չէ. ինչու որ անո՛վ կ՚ապրինք եւ կը շարժինք ու կանք։ Գործ. ԺԷ. 27, 28։ Բաղդատէ Եսայ. ԿԶ. 1։ Եբր. Ա. 3։

3. Աստուծոյ ստորոգելիներէն մէկ քանիները ըսէ։

Յաւիտենական Թագաւոր՝ որ անեղծ ու աներեւոյթ է, մի միայն իմաստուն Աստուած։ Ա Տիմ. Ա. 17։ Զօրութիւնը Աստուծոյ է։ Սաղմ. ԿԲ. 11։ Արդարութիւնը ու իրաւունքը

անոր աթոռին հիմերն են: Սաղմ. ՂԷ. 2. Բաղ. Յոբ. Թ. 4: ԺԱ. 7—9: Եսայ. Խ. 12—17: Եբր. Ա. 12: Ա Տիմ. Զ. 16:

**4. Մարդն ո՞ւսկէց եղաւ:**

Եւ Տէր Աստուած գետնի հողէն շինեց մարդը, և անոր քիթին ծակերուն կենդանութեան շունչ փչեց, ու մարդը կենդանի հոգի եղաւ: Ծնն. Բ. 7:

**5. Աստուած մարդը ինչպէս ստեղծեց.**

Աստուած իր պատկերովը ստեղծեց մարդը. Աստուծոյ պատկերովը ստեղծեց զանիկայ: Ծնն. Ա. 27: Եւ Աստուած իր ամէն ըրածը տեսաւ և ահա՛ շատ բարի էր: Ծնն. Ա. 31: Աստուած մարդը ուղիղ ստեղծեց: Ժող. Է. 29: Բաղ. Սաղմ. Ը. 5: Կող. Գ. 10:

**6. Մեղքն ինչպէ՞ս աշխարհք մտաւ:**

Մէկ մարդէ մը մեղքը աշխարհք մտաւ. և ան մեղքէն մահը, և այնպէս ամէն մարդոց վըրայ տարածուեցաւ մահը, քանզի ամէնքը մեղանչեցին: Հռովմ. Ե. 12:

**7. Առաջին մեղքն ի՞նչ էր:**

Եւ Տէր Աստուած Ադամը կանչեց, և ըսաւ անոր . . . կերա՞ր ան ծառէն՝ որուն համար քեզի պատուիրեցի որ անկէ չուտես: Եւ Ադամ ըսաւ. Ան կնիկը՝ որ ինծի հետ ըլլալու տուիր, ան ինծի տուաւ ծառէն, ու ես կերայ: Ծնն. Գ. 9. 11, 12: Բաղ. Ծնն. Բ. 16, 17: Բ Կորնթ. ԺԱ. 3:

**8. Ադամին մեղքն անոր ցեղին վրայ ազդեցութիւն ըրա՞ւ:**

Ադամ . . . իր նմանութեամբը՝ իր պատկերին պէս որդի ծնաւ: Ծնն. Ե. 3: Մէկ մարդուն անհնազանդութիւնովը շատերը մեղա-

ւոր եղան։ Հռովմ. Ե. 19։ Մէկուն յանցանքովը շատերը մեռան։ Հռովմ. Ե. 15։ Մենք . . . բնութեամբ բարկութեան որդիք էինք՝ ինչպէս ուրիշները։ Եփես. Բ. 3։ Բաղ. Յոբ. ԺԴ. 4։ ԺԵ. 14—16։ Սաղմ. ԾԱ. 5։

9. Մեղք չունեցող մարդ կա՞յ։

Մեղք չգործող մարդ չկայ։ Գ Թագ. Ը. 46։ Ամբարիշտները իրենց մօրը արգանդէն խոտորեցան. որովայնէն կը մոլորին սուտ խօսելով։ Սաղմ. ԾԸ. 3։ Իրաւ որ երկրի վրայ արդար մարդ չկայ՝ որ աղէկութիւն ընէ, ու մեղք չգործէ։ Ժող. Է. 20։ Արդար մը չկայ՝ ո՛չ մէկ հատ մը։ Հռովմ. Գ. 10։ Բաղ. համար 11. 18։

10. Մարդուս մեղաւորութիւնը ո՞րչափ է

Եւ Տէրը տեսաւ որ մարդոց չարութիւնը երկրի վրայ կը շատնար, և անոնց սրտին խորհուրդներուն բոլոր գաղափարները միայն չար էին ամէն օր։ Ծննդ. Զ. 5։ Քանզի մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է. ինչու որ Աստուծոյ օրէնքին չհնազանդիր, մանաւանդ չկրնար ալ։ Վասն զի մարմինով եղողները չեն կրնար Աստուծոյ հաճոյ ըլլալ։ Հռովմ. Ը. 7, 8։ Բաղ. Սաղմ. ԺԴ. 1—3։ Միք. Է. 2—4։

11. Մարդը փրկելու համար Աստուած ի՞նչ ըրաւ։

Աստուած անանկ սիրեց աշխարհը մինչև որ իր միածին Որդին տուաւ, որ ամէն ո՛վ որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ։ Յովհ. Գ. 16։ Բաղ. Հռովմ. Ե. 6—10։ Ա Յովհ. Գ. 16։ Դ. 9։

12. Աստուծոյ Որդին ո՞վ է։

Յիսուս ըսաւ . . . Քեզի հետ խօսողը ան է։ Յովհ. Թ. 37։

13. Անիկայ ինչո՞ւ համար Յիսուս կոչուեցաւ ։

Անոր անունը ՅԻՍՈՒՍ (այսինքն՝ փրկիչ) դրնես. քանզի անիկայ իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ ։ Մատթ. Ա. 21 ։ Բաղ. Հռովմ. Ը. 3, 4 ։ Բ Կորնթ. Ե. 21 ։

14. Անոր վրայով ինչ ըսուած է Յովհ. Ա. գլխուն մէջ ։

Սկիզբէն էր Բանը, ու Բանը Աստուծոյ քովն էր, և Բանը Աստուած էր ։ . . . Ամէն բան անով եղաւ, և առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ ։ Յովհ. Ա. 1—3 ։ Եւ Բանը մարմին եղաւ, ու մեր մէջը բնակեցաւ, և անոր փառքը տեսանք, Հօրմէն միածնի փառքին պէս, շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն ։ Յովհ. Ա. 14 ։

15. Անիկայ ինչո՞ւ կրնար ամէն բան ընել ։

Բանը Աստուած էր ։ Յովհ. Ա. 1 ։

16. Ո՞վ է Սուրբ Հոգին ։

Ճշմարտութեան Հոգին, որ աս աշխարհս անիկայ չկրնար ընդունիլ. ինչու որ չտեսներ անիկայ, ու չճանչնար անիկայ. բայց դուք կը ճանչնաք անիկայ, ինչու որ ձեր քովը կը բնակի, և ձեր հետը պիտի ըլլայ ։ Յովհ. ԺԴ. 17 ։

17. Սուրբ Հոգին պաշտօնն ինչ է ։

Երբոր ինքը՝ ճշմարտութեան Հոգին գայ, ամէն ճշմարտութեան պիտի առաջնորդէ ձեզի. ինչու որ չէ՛ թէ ինքնիրմէն պիտի խօսի, հապա ինչ որ լսէ՝ ան պիտի խօսի, ու գալիքները ձեզի պիտի պատմէ ։ Յովհ. ԺԶ. 13 ։ Տես նաև համար 8—11 ։

18. Սուրբ Հոգին Աստուածութիւնը ցուցնող վկայութիւնները որո՞նք են ։

Գացէ՛ք բոլոր ազգերը աշակերտեցէ՛ք. մկրտեցէ՛ք զանոնք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ։ Մատթ. ԻԸ. 19 ։ Տէր Յիսուս Քրիս-

տոսի շնորհքը՝ և Աստուծոյ սէրը՝ ու Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը ձեր ամենուն հետը ըլլայ։ Բ Կորնթ. ԺԳ. 13։ Բայց Աստուած մեզի յայտնեց (ան բաները) իր Հոգիովը. ինչու որ Հոգին ամէն բան կը քննէ, Աստուծոյ խորունկ բաներն ալ։ Ա Կորնթ. Բ. 10։

19. Երրորդութեան անձերը նշանակող վկայութիւնները որո՞նք են։

Բայց երբոր Մխիթարիչը գայ՝ որ ես Հօրմէն ձեզի պիտի ղրկեմ, ան ճշմարտութեան Հոգին՝ որ Հօրմէն կ'ելլէ, անիկայ ինծի համար պիտի վկայէ։ Յովհ. ԺԵ. 26։ Ճշմարի՛տ կ'ըսեմ ձեզի, որ ամէն մեղքերը պիտի ներուին մարդոց որդիներուն, և հայհոյութիւնները՝ ո՛րչափ որ հայհոյեն. բայց ո՛վ որ Հոգւոյն Սրբոյ դէմ հայհոյէ, յաւիտեան թողութիւն պիտի չունենայ։ Մարկ. Գ. 28, 29։ Բաղ. Եփես. Բ. 18, և Մատթ. Գ. 16, 17։

20. Քանի՞ Աստուած կայ։

Ես եմ Տէրը, ու ուրիշ մը չկայ. ինծմէ զատ Աստուած չկայ։ Եսայ. ԽԵ. 5։ Տես նաև 18։ Ես եմ առաջինը, ու ես եմ վերջինը, ու ինծմէ ուրիշ Աստուած չկայ։ Եսայ. ԽԴ. 6։ Տե՛ս նաև 8։ Քանզի մէկ Աստուած մը կայ։ Ա Տիմ. Բ. 5։ Աստուած մէկ է։ Գաղ. Գ. 20։

21. Որո՞ւ երկրպագութիւն կրնայ ըլլալ։

Քու Տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընես, ու միայն զանիկայ պաշտես։ Մատթ. Դ. 10։

22. Հրեշտակներուն ու փառաւորեալ սուրբերուն չէ՞նք կրնար երկրպագութիւն ընել։

Զգուշացի՛ր՝ մի՛ ըներ. ինչու որ ես ալ քու ծառայակիցդ եմ՝ ու քու եղբայրներուդ, որոնք Յիսուսի վկայութիւնը ունին. Աստուծոյ երկրպ-

պագութի՛ւն ըրէ. ինչու որ Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է։ Յայտ. ԺԹ. 10։ Զըլլայ որ մէկը զրկէ ձեզ մրցանակէն. որ ուզէ խոնարհութիւնով ու հրեշտակներու կրօնքով չտեսնուած բաներուն միջամուխ ըլլալ, իր մարմինին մտքովը փուճ տեղը հպարտանալով։ Կող. Ե. 18։

23. Ինչո՞ւ Քրիստոս աշխարհք եկաւ։

Աս խօսքը հաւատարիմ է՝ ու բոլորովին ընդունելութեան արժանի. որ Քրիստոս Յիսուս աշխարհք եկաւ մեղաւորները փրկելու, որոնց գլուխը ես եմ։ Ա Տիմ. Ա. 15։ Եւ գիտէք որ անիկայ անոր համար յայտնուեցաւ, որ մեր մեղքերը վերցընէ. ու իր մէջը մեղք չկայ։ Ա Յովհ. Գ. 5։

24. Ի՞նչ ըրաւ Քրիստոս մեղաւորները փրկելու համար։

Սակայն Աստուած իր սէրը որ մեր վրայ ունէր՝ յայտնեց, որ երբ դեռ մեղաւոր էինք, Քրիստոս մեզի համար մեռաւ։ Հռովմ. Ե. 8։ Վասն զի Քրիստոս ալ մեղքի համար մէկ անգամ չարչարուեցաւ, Արդարը անարդարներուն վրայ, որ մեզ Աստուծոյ մօտեցընէ. որ թէպէտ մեռաւ մարմինով, բայց կենդանի է հոգիով։ Ա Պետ. Գ. 18։ Բայց հիմա մէկ անգամ մը դարերուն վերջը իր անձին պատարագովը յայտնուեցաւ՝ մեղքը մէկ դի ձգելու համար։ Եբր. Թ. 26։ Բաղ. Ա Կորն. ԺԵ. 3։ Բ Կորն. Ե. 21։ Յովհ. Գ. 14—17։ Ա Պետ. Բ. 24։

25. Ինչո՞ւ պէտք էր որ Քրիստոս մեռնէր։

Որ զանիկայ առաջուց սահմանեց Աստուած՝ հաւատքով քաւութիւն ըլլալ անոր արիւնովը . . . իր արդարութիւնը ցուցընելու համար . . . որ ինքը արդար ըլլայ, և արդարացընէ Յիսուսի

հաւատքէն եղողը ։ Հռովմ. Գ. 25, 26 ։ Արիւն չթափուած թողութիւն չըլլար ։ Եբր. Թ. 22 ։

26. Որո՞նց համար մեռաւ Քրիստոս ։

Ամենուն համար մեռաւ ։ Բ Կորնթ. Ե. 15 ։ Անիկայ մեր մեղքերուն քաւութիւն է, և չէ թէ միայն մերիններուն, հապա բոլոր աշխարհին (մեղքերուն) ալ ։ Ա Յովհ. Բ. 2 ։ Կենդանի Աստուծոյ յուսացեր ենք, որ ամէն մարդոց փրկիչն է, մանաւանդ հաւատացեալներուն ։ Ա Տիմ. Դ. 10 ։ Բաղ. Բ. 6 ։

27. Բաւական փրկի՞չ մըն է Քրիստոս ։

Ինչու որ գիտեմ թէ որո՛ւ եմ հաւատացեր, և համոզուած եմ՝ որ իմ իրեն աւանդած բանս կրնայ պահել մինչև ան օրը ։ Բ Տիմ. Ա. 12 ։ Բոլորովին կարող ալ է ապրեցընելու անոնք՝ որ իրմով Աստուծոյ կու գան. որովհետև ինքը միշտ կենդանի է անոնց համար բարեխօս ըլլալու ։ Եբր. Է. 25 ։ Բաղ. Յովհ. Ե. 37 ։ ԺԷ. 12 ։ Հռովմ. Ը. 38, 39 ։

28. Կա՞յ ուրիշ փրկիչ ։

Ուրիշ մէկով մը փրկութիւն չկայ. ինչու որ անկէ 'ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդոց մէջ տրուած, որ անով կարող ըլլանք փրկուելու ։ Գործ. Դ. 12 ։ Բաղ. Յովհ. ԺԴ. 6 ։ Եսայ. ԿԳ. 5 ։

29. Ո՞ր բանէն կը փրկէ Քրիստոս ։

Անիկայ իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ ։ Մատթ. Ա. 21 ։ Վասն զի ան որ անկարելի էր օրէնքին՝ որովհետև տկար էր մարմնով, Աստուած իր Որդին ղրկեց մեղանչական մարմնի նմանութեամբ, ու մեղքի համար, և դատապարտեց մեղքը ան մարմնին մէջ, որ օրէնքին արդարութիւնը կատարուի մեր մէջը, որ

մարմնաւորապէս չենք քալեր՝ հապա հոգեւորապէս ։ Հռովմ. Ը. 3, 4 ։ Տես նաեւ համար 1, եւ Յովհ. Գ. 15. 35, 36 ։ Յայտ. Ի. 6 ։

**30. Ի՞նչ է մեղքը ։**

Մեղքը անօրէնութիւն է ։ Ա Յովհ. Գ. 4 ։

**31. Ի՞նչ է մեղքին պատիժը ։**

Այն անձը որ մեղք կը գործէ՝ անիկայ պիտի մեռնի ։ Եզեկ. ԺԸ. 4 ։ Մեղաց վարձքը մահ է ։ Հռովմ. Զ. 23 ։ Անիծեալ ըլլայ ամէն մարդ որ օրէնքին գիրքը ամէն գրուածներուն մէջ չկենար՝ որ զանոնք կատարէ ։ Գաղ. Գ. 10 ։

**32. Աս պատիժն ամենուն վրայ պիտի գա՞յ ։**

Իսկ արդ՝ դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն՝ որոնք մարմնաւոր կերպով չեն վարուիր ։ Հռովմ. Ը. 4 ։ Օրէնքին վախճանը Քրիստոս է՝ ամէն հաւատացեալին արդարութեան համար ։ Հռովմ. Ժ. 4 ։ Բաղ. Գործ. ԺԳ. 38, 39 ։

**33. Աս հրաւէրանը որո՞նք հրաւիրուած են ։**

Եկէք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ, եւ ես ձեզ պիտի հանգչեցընեմ ։ Իմ լուծս ձեր վրայ առէ՛ք, ու ինծմէ սորվեցէ՛ք որ հեզ եմ ու սրտով խոնարհ, եւ ձեր անձերուն հանգըստութիւն պիտի գտնէք ։ Ինչու որ իմ լուծս քաղցր է, եւ իմ բեռս թեթեւ ։ Մատթ. ԺԱ. 28—30 ։ Ո՛վ երկրիս բոլոր ծայրերը՝ ինծի նայեցէք, որ փրկուի՛ք ։ Եսայ. ԽԵ. 22 ։

**34. Ե՞րբ կրնան գալ ։**

Ահա՛ հիմա է ընդունելի ժամանակը, ահա՛ հիմա է փրկութեան օրը ։ Բ Կորնթ. Զ. 2 ։ Այսօր թէ որ անոր ձայնին պիտի լսէք, ձեր սիրտերը մի՛ խստացնէք ։ Եբր. Դ. 7 ։

**35. Տղաք ալ կրնա՞ն գալ ։**

Թո՛ղ տուէք աս մանր տղոցը որ ինծի գան, և մի՛ արգիլէք ասոնք. ինչու որ Աստուծոյ թագաւորութիւնը ասանկներունն է: Մարկ. Ժ. 14: Դու քու Ստեղծիչդ երիտասարդութեանդ օրերուն մէջ յիշէ՛ դեռ թշուառութեան օրերը չեկած, ու ան տարիները չհասած, որոնց մէջ պիտի ըսես թէ՝ Անոնց չեմ հաւնիր: Ժող. ԺԲ. 1:

36. Քրիստոս պիտի ընդունի՞ իրեն գալողները:

Ան որ ինծի կու գայ, բնաւ դուրս պիտի չհանեմ: Յովհ. Զ. 37: Քանզի ո՛վ որ Տէրոջը անունը կանչէ՝ պիտի փրկուի: Հռովմ. Ժ. 13:

37. Աստուած կ'ուզէ՞ որ անոնք գան:

Ես կենդանի եմ՝ կ'ըսէ Տէր Եհովան, որ ամբարշտին մեռնիլը չեմ ուզեր. հապա որ ամբարիշտը իր ճամբայէն դառնայ ու ապրի. դարձէ՛ք՝ դարձէք ձեր չար ճամբաներէն. վասն զի ինչո՞ւ մեռնիք: Եզեկ. ԼԳ. 11: Բաղ. Բ Պետ. Գ. 9:

38. Անզղջացողներ կորսուողներ պէտք ըլլա՞ն:

Ասոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը: Մատթ. ԻԵ. 46: Որոնք պիտի պատժուին յաւիտենական սատակումով՝ Տէրոջը երեսէն ու անոր զօրութեանը փառքէն: Բ Թես. Ա. 9: Բաղ. Դան. ԺԲ. 2: Յովհ. Ե. 29: Մարկ. Թ. 43, 44: Յայտ. ԻԱ. 8:

39. Հաւատացողներէն կորսուող պէտք ըլլա՞յ:

Ամէն ո՛վ որ անոր հաւատայ՝ պիտի չամչնայ: Հռովմ. Ժ. 11: Ան որ Որդիին կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի: Յովհ. Գ. 36: Բայց Աստուծոյ հիմը հաստատուն կը կենայ, ու աս կնիքը ունի, թէ Տէրը կը ճանչնայ անոնք որ իրն են: Բ Տիմ. Բ. 19:

40. Անգամ մը ճշմարտապէս հաւատացողներէն կորսուող պէտք ըլլա՞յ։

Աս մասին վստահ ըլլալով՝ թէ ան որ ձեր մէջը բարի գործ մը սկսեց, մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը պիտի կատարէ։ Փիլիպ. Ա. 6։ Բաղ. Յովհ. Զ. 39։

41. Ինչո՞ւ համար ոմանք կը կորսուին։

Դուք չէք ուզեր ինծի գալ, որ կեանք ունենաք։ Յովհ. Ե. 42։ Ան որ Որդիին չհնազանդիր, անիկայ կեանք պիտի չտեսնէ. հապա Աստուծոյ բարկութիւնը անոր վրայ կը մնայ։ Յովհ. Գ. 36։ Բաղ. համար 19։ Դուք ինտո՞ր կրնաք հաւատալ, որ իրարմէ փառք կ'առնէք. և ան փառքը որ մէկ Աստուծմէն է, չէք փնտռեր։ Յովհ. Ե. 44։

42. Ի՞նչ պէտք է ընել որ փրկուինք։

Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին, ու պիտի փրկուիս դուն։ Գործ. ԺԶ. 31։ Ան որ ինծի կը հաւատայ, յաւիտենական կեանք ունի։ Յովհ. Զ. 47։ Ուստի ապաշխարեցէ՛ք՝ ու դարձի եկէք, որ մեղքերնիդ ջնջուի։ Գործ. Գ. 19։

43. Ամէն հաւատք օգուտ ունի՞։

Եւ Սիմոն ինքն ալ հաւատաց, ու մկրտուելով միշտ Փիլիպպոսին հետն էր. և կը զարմանար...։ Բայց Պետրոս ըսաւ անոր... Դուն աս բանին մէջ մասն ու բաժին չունիս. ինչու որ քու սիրտդ Աստուծոյ առջեւը շիտակ չէ... ինչու որ ես քեզ, մաղձի դառնութեան մէջ, և անիրաւութեան կապին մէջ կը տեսնեմ։ Գործ. Ը. 13. 20—23։ Դեւերն ալ կը հաւատան և կը սարսափին։ Յակ. Բ. 19։

44. Փրկարար հաւատքն ի՞նչ է։

Հաւատքը՝ որ սիրով 'ի գործ կը դրուի։ Գաղ.

Ե . 6 ։ Ասանկ ալ հաւատքը՝ թէ որ հետը գործ չունենայ, ըստ ինքեան մեռած է ։ Յակ . Բ . 17 ։ Սրտով կը հաւատայ մէկը արդարանալու ։ Հռովմ . Ժ . 10 ։

45 . Ինչո՞ւ ոմանք կը ընտրուին ։

Աստուած առաջուց ձեզ ընտրեց փրկուելու Հոգիին սրբելովը՝ ու ճշմարտութեան հաւատքովը ։ Բ Թես . Բ . 12 ։ Մեզ անով (Քրիստոսով) աշխարհիս սկիզբէն առաջ ընտրեց , որ մենք սուրբ ու անարատ ըլլանք իր առջեւը սիրով ։ Եփես . Ա . 4 ։ Մէկը չկրնար ինծի գալ , թէ որ զիս խրկող Հայրը անիկայ չքաշէ ։ Յովհ . Զ . 44 ։ Բաղ . Ա Թես . Ա . 4 ։

46 . Ի՞նչ ըսաւ Քրիստոս Նիկոդեմոսին ։

Թէ որ մէկ մարդ մը ջուրէն ու Հոգիէն չըծնանի , չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել ։ Մարմինէն ծնածը մարմին է , ու Հոգիէն ծնածը՝ հոգի է . . . Պէտք է ձեզի նորէն ծնանիլ ։ Յովհ . Գ . 5 , 6 , 7 ։

47 . Ինչո՞վ կրնանք գիտնալ թէ ոմանք նորէն ծնած են ։

Որոնք որ Աստուծոյ Հոգիովը կ՚առաջնորդուին , անոնք Աստուծոյ որդիքն են ։ . . . Նոյն ինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր Հոգիին , թէ մենք Աստուծոյ որդիքն ենք ։ Հռովմ . Ը . 14 . 16 ։ Մարմնաւոր եղողները մարմինին բաները կը մտածեն , ու հոգեւոր եղողները՝ Հոգիին բաները ։ Հռովմ . Ը . 5 ։ Թէ որ մէկը Քրիստոսի մէջ է , անիկայ նոր ստեղծուած մըն է . հիները անցաւ , և ահա ամէն բան նոր եղաւ ։ Բ Կորնթ . Ե . 17 ։ Բաղ . Գաղ . Ե . 22 , 23 ։

48 . Որո՞ն գործն է նոր ծնունդը ։

Որոնք որ զինքը (Քրիստոս) ընդունեցին , ա-

նոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը. որ անոնք ոչ արիւնէ և ոչ մարմինի կամքէ՝ ոչ ալ մարդու կամքէ, հապա Աստուծմէ ծնան։ Յովհ. Ա. 12, 13։ Բաղ. Եփես. Բ. 4, 5։

**49. Ինչ միջոց կը գործածէ անիկայ։**

Հաւատքը լսելէն է, ու լսելը Աստուծոյ խօսքէն։ Հռովմ. Ժ. 17։ Նորէն ծնած ըլլալով չէ՝ թէ ապականացու սերմէն, հապա անապականացուէն Աստուծոյ կենդանի ու յաւիտենական խօսքովը։ Ա Պետ. Ա. 23։ Քու մանկութենէդ 'ի վեր սուրբ գիրքերը գիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը։ Բ Տիմ. Գ. 15։ Հռովմ. Ա. 16։ Եբր. Դ. 12։

**50. Փրկութիւնը գործերէ՞ է։**

Շնորհքով փրկուած էք դուք հաւատքի միջոցով. և աս չէ՝ թէ ձեզմէ է, հապա Աստուծոյ պարգեւն է. չէ՝ թէ գործքերէն, որ մէկը չըպարծի։ Եփես. Բ. 8, 9։ Նոր (Աստուծոյ) առջեւը մէկ մարմին մը պիտի չարդարանայ օրէնքին գործքերովը. քանզի օրէնքով է մեղքը ճանչնալը։ Հռովմ. Գ. 20։

**51. Մարդս ընելու բան մը ունի՞։**

Ահով ու դողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք. ինչու որ Աստուած է՝ որ ձեր մէջը կը ներգործէ կամենալը ու ընելը իր հաճութեանը համար։ Փիլիպ. Բ. 12, 13։ Ձեր ըրած բոլոր յանցանքները ձեր վրայէն նետեցէք, և ձեզի նոր սիրտ ու նոր հոգի ստացէք. քանզի ինչո՞ւ մեռնիք։ Եզեկ. ԺԸ. 31։ Բաղ. Եփես. Ե. 1. 14։

**52. Փրկութիւնը մասով մը հաւատքէ ու մասով մը գործերէ՞ է։**

Կը սորվինք թէ մարդը հաւատքով կ'արդարանայ՝ առանց օրէնքին գործքերուն ։ Հռովմ. Գ. 28։ Բաղ. ԺԱ. 6։

53. Ուրեմն մեղքի մէջ պէտք կենա՞յ հաւատացեալը։

Քաւ լիցի. մենք որ մեղքին մեռանք, ի՞նչպէս դեռ անոր մէջը կենանք։ Հռովմ. Զ. 2։ Եւ ամէն մարդ որ աս յոյսը անոր (Աստուծոյ) մէջը ունի, ինքզինքը կը մաքրէ, ինչպէս որ անիկայ մաքուր է։ Ա Յովհ. Գ. 3։ Յիսուս Քրիստոսի արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ։ Ա Յովհ. Ա. 7։ Բաղ. Եփես. Ա. 4, և Բ. 10։

54. Օրէնքը վարմունքի կանոն կը մնա՞յ։

Աստուած իր Որդին խրկեց մեղանչական մարմնի նմանութեամբ, ու մեղքի համար, և դատապարտեց մեղքը անոր մարմնին մէջ, որ օրէնքին արդարութիւնը կատարուի մեր մէջը, որ մարմնաւորապէս չենք քալեր՝ հապա հոգևորապէս։ Հռովմ. Ը. 3, 4։

55. Քրիստոս ո՞ւր է իր մարմնաւոր ներկայութեանովը։

Աս Յիսուսը՝ որ ձեզմէ երկինքը համբարձաւ։ Գործ. Ա. 11։ Ուր որ Քրիստոս կը նստի Աստուծոյ աջ կողմը։ Կող. Գ. 1։

56. Քրիստոս հոն ի՞նչ կ'ընէ։

Քրիստոս . . . յարութիւն առաւ, ու Աստուծոյ աջ կողմն է. որ նաև մեզի համար բարեխօսութիւն կ'ընէ։ Հռովմ. Ը. 34։ Թէ որ մէկը մեղք գործելու ըլլայ, Հօրը քով բարեխօս ունինք Յիսուս Քրիստոս արդարը։ Ա Յովհ. Բ. 1։ Բաղ. Եբր. Է. 25, և Թ. 24—28։

57. Քանի՞ միջնորդ կայ։

Քանզի մէկ Աստուած մը կայ, ու մէկ միջնորդ մը Աստուծոյ ու մարդոց մէջը՝ Յիսուս

Քրիստոս մարդը. որ իր անձը ամենուն տեղը փրկանք տուաւ՝ իր ատենին վկայութիւն ըլլալու։ Ա Տիմ. Բ. 5, 6։ Յիսուս ըսաւ անոր. Ես եմ ճամբան ու ճշմարտութիւնը ու կեանքը. մէկը Հօրը քով չգար, եթէ ոչ ինծմով։ Յովհ. ԺԴ. 6։

58. Կրնա՞նք ուրիշ միջնորդ բռնել։

Զըլլայ որ մէկը զրկէ ձեզ մրցանակէն. որ ուզէ խոնարհութիւնով ու հրեշտակներուն կրօնքով չտեսած բաներուն միջամուխ ըլլալ, իր մարմնին միտքովը փուճ տեղը հպարտանալով։ Կող. Բ. 18։

59. Քրիստոս ինչ պէտք ընէ՞ իր ժողովուրդին։

Եւ իմ անունովս ինչ որ խնդրէք, պիտի կատարեմ անիկայ, որ Հայրը Որդիովը փառաւորուի. թէ որ իմ անունովս բան մը խնդրէք, անիկայ պիտի կատարեմ։ Յովհ. ԺԴ. 13, 14։ Մինչև հիմա իմ անունովս բան մը չխնդրեցիք. խնդրեցէ՛ք ու պիտի առնէք, որ ձեր ուրախութիւնը լման ըլլայ։ Յովհ. ԺԶ. 24։

60. Ո՞վ կը մխիթարէ հաւատացեալները՝ Քրիստոսի աշխարհի մէջ մարմնով ներկայ չըլլած ատենը։

Բայց ես ճշմարիտը կ'ըսեմ ձեզի. Աղէկ է ձեզի թէ որ ես երթամ. քանզի թէ որ ես չերթամ, Մխիթարիչը ձեզի չգար. հապա թէ որ երթամ, անիկայ ձեզի կը ղրկեմ։ Յովհ. ԺԶ. 7։

61. Ո՞վ է մխիթարիչը։

Սուրբ Հոգին՝ որ Հայրը իմ անունովս պիտի ղրկէ, անիկայ ձեզի բոլորը պիտի սորվեցընէ, և ինչ որ ձեզի ըսի՝ միտքերնիդ պիտի բերէ։ Յովհ. ԺԴ. 26։

62. Սուրբ Հոգին ինչ կ'ընէ հաւատացեալներուն համար։

39336-67

Անանկ ալ Հոգին օգնութեան կը հասնի մեր տկարութիւններուն . քանզի ինչ բանի համար աղօթելու ենք ըստ արժանւոյն , չենք գիտեր . բայց ինքը Հոգին բարեխօս կ՚ըլլայ մեզի համար անբարբառ հառաչանքներով ։ Հռովմ . Ը . 26 ։ Ընտրուած՝ Հօր Աստուծոյ կանխագիտութեանը համեմատ , Հոգիին սրբացընելովը , հնազանդութեան և Յիսուս Քրիստոսի արեանը սրսկուելուն համար ։ Ա Պետ . Ա . 2 ։ Բաղ . Եփես . Դ . 30 , և Տիտ . Գ . 5 ։

63 . Սուրբ Հոգին ինչ միջոց կը գործածէ ։

Սրբէ՛ անոնք քու ճշմարտութիւնովդ . քու խօսքդ ճշմարտութիւն է ։ Յովհ . ԺԷ . 17 ։ Քրիստոս ալ սիրեց եկեղեցին , ու իր անձը մատնեց անոր համար . որ անիկայ սրբէ ու մաքրէ աւազանին ջրովը՝ խօսքով ։ Եփես . Ե . 25 , 26 ։

64 . Ո՞ր են ննջեցեալ հաւատացեալները ։

Ալ աւելի կ՚ուզենք մարմինէն հեռանալ , ու Տէրոջը քովը կենալ ։ Բ Կորնթ . Ե . 8 ։ Մեռնելու ու Քրիստոսի հետ ըլլալու . . . քանզի ան՝ շատ աւելի աղէկ է ։ Փիլիպ . Ա . 23 ։ Ո՛վ Հայր՝ անոնք որ դուն ինծի տուիր , կ՚ուզեմ որ ուր որ ես եմ , անոնք ալ իմ հետս ըլլան , որպէս զի տեսնեն իմ փառքս՝ որն որ ինծի տուիր ։ Յովհ . ԺԷ . 24 ։

65 . Հաւատացեալները միշտ մարմինէն հեռացած պիտի մնան ։

Պէտք է որ աս ապականացու մարմինը անապականութիւն հագնի , ու աս մահկանացուս անմահութիւն հագնի ։ Ա Կորնթ . ԺԵ . 53 ։ Ինչու որ Տէրը ազդարարութեան հրամանով՝ հրեշտակապետին ձայնովը ու Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ , և Քրիստոսով մեռածները առաջ յարութիւն պիտի առնեն ։ Ա Թես . Դ . 15 ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Госбиблиотека ՀՍՍՀ-Арм. ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

66. Չարերն ալ յարութիւն պիտի առնե՞ն։

Ինչպէս որ Ադամով ամէնը կը մեռնին, անանկ ալ Քրիստոսով ամէնը կենդանի պիտի ըլլան։ Ա Կորնթ. ԺԵ. 22։ Եւ տեսայ պզտիկ ու մեծ մեռելները՝ որ աթոռին առջևը կայնած էին. ու գիրքերը բացուեցան . . . և ով որ կենաց գրքին մէջը գրուած չգտնուեցաւ, կրակի լճին մէջը ձգուեցաւ։ Յայտ. Ի. 12—15։ Նաև. Դան. ԺԲ. 2, և Յովհ. Ե. 28, 29։

67. Յարութենէն ետքը ի՞նչ պիտի ըլլայ։

Երբոր Որդին մարդոյ իր փառքովը գայ, և բոլոր սուրբ հրեշտակները իր հետը, անատենը իր փառաց աթոռը պիտի նստի. և անոր առջևը պիտի ժողվուին բոլոր ազգերը, ու անոնք իրարմէ պիտի զատէ, ինչպէս որ հովիւ մը ոչխարները այծերէն կը զատէ. և ոչխարները իր աջ կողմը պիտի կայնեցընէ, ու այծերը ձախ կողմը։ Մատթ. ԻԵ. 31—33։

68. Ի՞նչ բաներ պիտի դատուին։

Բայց ձեզի կ՚ըսեմ, թէ Ամէն դատարկ խօսքերու համար՝ որ մարդիկ կը խօսին, դատաստանին օրը համար պիտի տան։ Մատթ. ԺԲ. 36։ Վասնզի Աստուած ամէն գործքը՝ ամէն ծածուկ բաներու հետ՝ թէ բարին և թէ չարը՝ դատաստանի պիտի բերէ։ Ժող. ԺԲ. 14։ Նաև. Ա Կորնթ. Դ. 5։

69. Ո՞վ պիտի ըլլայ դատաւորը։

Վասնզի հայրը մէկը չդատեր, հապա ամէն դատաստանը Որդիին տուաւ։ Յովհ. Ե. 22։ Նաև. Գործ. ԺԷ. 31։ Հռոմ. Բ. 16։

70. Ինչո՞վ պիտի դատուին մարդիկ։

Ան որ իս կ՚անարգէ, և իմ խօսքերս չընդունիր, կայ մէկը որ զանիկայ կը դատէ. ան խօսքը

որ ես խօսեցայ, ան պիտի դատէ անիկայ վերջին
օրը Յովհ. ԺԲ. 48 ։ Որովհետեւ անոնք որ առանց օրէն-
քի մեղք գործեցին, առանց օրէնքի պիտի կոր-
սուին. և անոնք որ օրէնքի տակ մեղք գործեցին,
օրէնքով պիտի դատուին . . . ան օրը որ Աստ-
ուած մարդոց ծածուկ բաները պիտի դատէ Յի-
սուս Քրիստոսի ձեռքովը՝ իմ քարոզած աւե-
տարանիս համեմատ ։ Հռովմ. Բ. 12. 16.

71. Արդարներուն բաժինը ի՞նչ պիտի ըլլայ ։
Ան ատենը Թագաւորը իր աջ կողմի եղողնե-
րուն պիտի ըսէ. Եկէք իմ Հօրս օրհնածները,
աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած
Թագաւորութիւնը ժառանգեցէք ։ Մատթ. ԻԵ. 34 ։
Եւ անանկ յաւիտեան Տէրոջը հետ պիտի ըլլանք ։
Ա Թես. Դ. 16 ։

72. Ի՞նչ պիտի ըլլայ չարերուն բաժինը ։
Ան ատենը ձախ կողմը եղողներուն ալ պիտի
ըսէ. Մէկ դի՛ գացէք ինծմէ անիծեալներ՝ յաւիտե-
նական կրակին մէջը, որ պատրաստուած է սա-
տանային՝ ու իր հրեշտակներուն ։ Մատթ. ԻԵ.
41 ։ Նաշ. ԻԵ. 46 ։

73. Անկէ ետև ի՞նչ պիտի ըլլայ ։
Անկէ ետև կու գայ վախճանը, երբոր Թագա-
ւորութիւնը պիտի տայ Աստուծոյ ու Հօրը ձեռքը,
երբոր խափանէ ամէն իշխանութիւնը, և ամէն
պետութիւնը ու զօրութիւնը . . . Ան ատենը
Որդին ինքն ալ պիտի հնազանդի անոր, որ իրեն
հնազանդեցուց ամէնը, որպէս զի Աստուած ըլ-
լայ ամէնը՝ ամէն բանի մէջ ։ Ա Կորնթ. ԺԵ. 24. 28.

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

### ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Ո՞ւրկէ կրնանք սորվիլ մեր պարտաւորութիւնները։
Օրէնքին ու վկայութեանը թող հարցընեն. թէ որ աս խօսքիս համեմատ չզրուցեն, անոնք ամենեւին լոյս չունին։ Եսայ. Ը. 20։ Քու խօսքդ իմ ոտքերուս ճրագ է, ու իմ շաւիղներուս լոյս։ Սաղմ. ՃԺԹ. 105, Բաղ. ՃԺԹ. 130, եւ ՀԸ. 1։

2. Ո՞վոնք գրեցին Սուրբ Գիրքերը։
Ինչու որ մարգարէութիւն մը երբեք մարդոց կամքին պէս չտրուեցաւ. հապա Աստուծոյ սուրբ մարդիկը Սուրբ Հոգիէն շարժուած՝ խօսեցան։ Բ Պետ. Ա. 21։

3. Ի՞նչ նպատակի համար գրուեցան Սուրբ Գիրքերը։
Ասոնք գրուեցան, որ հաւատաք թէ Յիսուսը Քրիստոսն է՝ Աստուծոյ Որդին. եւ որ հաւատալով կեանք ունենաք անոր անունովը։ Յովհ. Ի. 31։ Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է, եւ օգտակար է սորվեցընելու, յանդիմանելու, շտկելու, ու արդարութեան խրատելու համար։ Բ Տիմ. Գ. 16։ Բաղ. Գ. 17, եւ Հռովմ. ԺԵ. 4։

4. Սուրբ Գիրքերը մեզի համար պարտաւորիչ են։
Արդ՝ զգուշ եղէք ձեր Տէր Աստուծոյն ձեզի պատուիրածին պէս ընելու, ու աջ դին կամ ձախ դին չխոտորիք։ Բ Օրէն. Ե. 32։ Բաղ. Ե. 33։ Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները աւրելու. չեկայ աւրելու, հապա կատարելու։ Մատթ. Ե. 17։

5. Կրնա՞նք մարդիկ աս Սուրբ Գիրքերուն վրայ բան աւելցընել:

Ձեզի պատուիրած խօսքիս վրայ բան մը չաւելցընէք, ու անկէ բան մը չպակսեցընէք: Բ Օրէն. Դ. 2: Բայց թէ որ մենք՝ կամ երկինքէն հրեշտակ մը գայ աւետարանէ ձեզի անկէ ուրիշ՝ որ մենք աւետարանեցինք ձեզի, նզովեալ ըլլայ: Գաղ. Ա. 8: Բաղ. Ա. 9: Նաև Բ Օրէն. ԺԲ. 32: Առակ. Գ. 5, 6: Յայտ. ԻԲ. 18, 19:

6. Սուրբ Գիրքերուն նկատմամբ մեր պարտաւորութիւնը ի՞նչն է:

Գիրքերը քննեցէք. ինչու որ դուք անոնցմով կը սեպէք յաւիտենական կեանք ունենալ. և բուն անոնք են որ ինծի համար կը վկայեն: Յովհ. Ե. 39: Քրիստոսի խօսքը ձեր մէջը բնակի առատապէս՝ ամէն իմաստութիւնով իրար սորվեցընելու ու խրատելու, սաղմոսներով և օրհնութիւններով, ու հոգևոր երգերով: Կող. Գ. 16: Բաղ. Ղուկ. ԺԶ. 29:

7. Ի՞նչ կերպով տուաւ Աստուած բարոյական օրէնքը:

Իր ուխտը՝ տասը պատուիրանքները ձեզի իմացուց, ու պատուիրեց որ անոնք ընէք. և անոնք երկու հատ քարէ տախտակներու վրայ գրեց: Բ Օրէն. Դ. 13: Բաղ. Ժ. 4, ու Ելից ԼԴ. 28:

8. Ո՞ւր հրատարակուեցաւ աս օրէնքը:

Ու Տէրը Սինայ լեռանը վրայ՝ լեռանը գլուխը իջաւ . . . Ու Սինայ լեռը բոլորովին կը մխար. ինչու որ Տէրը անոր վրայ կրակով իջաւ, ու անոր մուխը հնոցի մուխի պէս կ՚ելլէր, և բոլոր լեռը սաստիկ կը դողար: Ելից ԺԹ. 20, 18: Կարդա՛ նաև ԺԹ. 16--20.

## Ա

9. Ի՞նչ է առաջին պատուիրանքը:

Իմ առջևս ուրիշ աստուածներ չունենաս: Ելից Ի. 3:

10. Ի՞նչ կը սորվինք տասնէն պատուիրանքէն։

Երկրպագութիւն ըրէք անոր՝ որ ստեղծեց երկինքը ու երկիրը՝ և ծովը ու ջուրերուն աղբիւրները։ Յայտ. ԺԴ. 7։ Ու քու Տէր Աստուածդ՝ բոլոր սրտովդ, բոլոր հոգիովդ ու բոլոր զօրութիւնովդ սիրես։ Բ Օրէն. Զ. 5։ Իմ սիրելիներս՝ կռապաշտութենէ փախէ՛ք։ Ա Կորնթ. Ժ. 14։ Բաղ. Ա Յովհ. Ե. 21։

11. Ի՞նչ կ՚արգիլուի տասնէն պատուիրանքով։

Ուրիշ Աստուծոյ երկրպագութիւն պէտք չընես. քանզի Եհովան նախանձոտ կը կոչուի, և նախանձոտ Աստուած է։ Ելից ԼԴ. 14։ Օտար աստուածներուն՝ ձեր բոլորտիքը եղող ժողովրդոց աստուածներուն ետևէն չերթաք։ Բ Օրէն. Զ. 14։ Բաղ. Երեմ. ԻԵ. 6։

12. Ի՞նչպէս կը սորվինք Քրիստոսէ աս պատուիրանքին հնազանդիլ։

Թէ որ մէկը ինծի կու գայ, ու չատեր իր հայրը և մայրը, ու կինը և զաւակները, ու եղբայրները և քոյրերը, նաև իր կեանքն ալ, չըկրնար իմ աշակերտս ըլլալ։ Ղուկ. ԺԴ. 26։ Բաղ. Մատթ. Ժ. 37։

13. Աստուծոյ ինչպէ՞ս երկրպագութիւն ընելու է։

Աստուած հոգի է. և իրեն երկրպագողներուն ալ պէտք է որ հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ընեն։ Յովհ. Դ. 24։ Բաղ. Ա Տիմ. Բ. 8։ Եբր. ԺԲ. 28։

14. Կրնա՞նք աղօթք ընել։

Անոնց առակ մըն ալ ըսաւ աս բանիս վրայ՝ թէ պէտք է ամէն ատեն աղօթք ընել ու չձանձրանալ։ Ղուկ. ԺԸ. 1։ Խնդրեցէ՛ք՝ և պիտի տրուի ձեզի. փնտռեցէ՛ք՝ և պիտի գտնէք. դուռը զարկէ՛ք՝ և պիտի բացուի ձեզի։ Մատթ. Է. 7։ Բաղ. Մարկ. ԺԱ. 24։

15 . Որո՞ւ աղօթք ընելու ենք ։

Իսկ դուն երբոր աղօթք կ'ընես , մտի՛ր քու ներքին սենեակդ , ու դուռդ գոցէ , և աղօթք ըրէ քու Հօրդ՝ որ գաղտուկ տեղը կը գտնուի . և քու Հայրդ որ գաղտուկը կը տեսնէ , քեզի յայտնապէս հատուցումը պիտի ընէ ։ Մատթ . Զ . 6 ։ Տէրը փնտռեցէք , քանի որ անիկայ կը գտնուի . անիկայ կանչեցէք , քանի որ անիկայ մօտ է ։ Եսայ . ԾԵ . 6 ։

16 . Որո՞ւն անունովը աղօթք ընելու ենք ։

Իմ անունովս ինչ որ խնդրէք Հօրմէն , պիտի տայ ձեզի ։ Մինչև հիմա իմ անունովս բան մը չխնդրեցիք . խնդրեցէք՝ ու պիտի առնէք , որ ձեր ուրախութիւնը լման ըլլայ ։ Յովհ . ԺԶ . 23 , 24 ։ Բաղ . ԺԶ . 26 , 27 ։ ԺԵ . 16 ։ ԺԴ . 13 , 14 ։

17 . Ի՞նչ ոգիով աղօթելու ենք ։

Ու երբոր աղօթքի կը կայնիք , ներեցէք թէ որ մէկուն դէմ բան մը ունիք , որպէս զի ձեր Հայրն ալ՝ որ երկինքն է , ներէ ձեզի ձեր յանցանքները ։ Մարկ . ԺԱ . 25 , Բաղ . ԺԱ . 26 ։ Ու զիս պիտի փնտռէք , և պիտի գտնէք . վասն զի ձեր բոլոր սրտովը պիտի խնդրէք զիս ։ Երեմ . ԻԹ . 13 ։ Բաղ . Սաղմ . ԼԷ . 4 ։ Առակ . ԻԱ . 13 ։ Մատթ . Ե . 23 , 24 ։ Եբր . Ժ . 22 ։

18 . Ի՞նչ բանի համար աղօթք ընելու ենք ։

Ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով , գոհութիւնով մէկ տեղ ձեր խնդրուածքը Աստուծոյ յայտնի ըլլայ ։ Եւ Աստուծոյ խաղաղութիւնը որ ամէն միտքէ վեր է , ձեր սիրտերը ու միտքերը Քրիստոս Յիսուսով պիտի պահպանէ ։ Փիլիպ . Դ . 6 , 7 ։ Աղօթք ըրէք իրարու համար ։ Յակ . Ե . 16 ։ Բաղ . Ա . 5 , և Ա Տիմ . Բ . 1 , 2 ։

19 . Ո՞րչափ յաճախ աղօթք ընելու ենք ։

Անդադար աղօթք ըրէք: Ամէն բանի մէջ գոհութիւն տուէք. ինչու որ աս է Աստուծոյ կամքը: Ա Թես. Ե. 17, 18: Շարունակ աղօթքի՛ նուէր եղէք, անոր մէջը արթուն մնալով գոհութեամբ: Կող. Դ. 2: Իրիկունը՝ առտուն ու կէսօրը պիտի բողոքեմ ու հառաչեմ, և անիկայ պիտի լսէ իմ ձայնս: Սաղմ. ԾԵ. 17: Բաղ. ՃԺԹ. 164, և Մատթ. ԻԶ. 41, և Եփես. Զ. 18:

20. Ի՞նչ խոստացած է աղօթք ընողներուն:

Անոնք դեռ չկանչած՝ պատասխան պիտի տամ, և քանի որ դեռ կը խօսին՝ պիտի լսեմ: Եսայ. ԿԵ. 24: Եւ ամէն ինչ որ աղօթքի մէջ հաւատքով կը խնդրէք, պիտի առնէք: Մատթ. ԻԱ. 22: Բաղ. Ա Յովհ. Ե. 14, 15: Սաղմ. ԼԴ. 17: Երեմ. ԼԳ. 3: Ա Յովհ. Գ. 22:

21. Ի՞նչ է Տէրունական աղօթքը:

Ո՛վ Հայր մեր՝ որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ, քու կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ. մեր ամէն աւուր հացը՝ այսօր մեզի տուր. և մեզի ներէ՛ մեր պարտքերը, ինչպէս որ մենք կը ներենք մեր պարտականներուն. ու մեզ փորձութեան մի՛ տանիր. հապա չարէն մեզ ազատէ՛. ինչու որ քուկդ է թագաւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտեանս. ամէն: Մատթ. Զ. 9—13:

22. Աստուածաշունչը ի՞նչ կանոններ ունի ժամ պահելու:

Երբոր ծոմ կը պահես, գլուխդ օծէ՛, ու երեսդ լուա՛, որ մարդոց ծոմ պահողի պէս չերևնաս: Մատթ. Զ. 17: Ուստի ալ մէկը թո՛ղ չդատէ ձեզ ուտելու կամ խմելու՝ կամ տօներու կողմանէ: Կող. Բ. 16: Բաղ. Եսայ. ԾԸ. 1—8:

Տես նաև Մատթ. Թ. 15, և Յովհ. Ա. 4. 10—14, և Բ. 2—16, և Հռով. ԺԴ. 2. 17:

23. Որո՞ւ խոստովանելու ենք մեր մեղքերը:

Իմ մեղքս քեզի յայտնեցի, և իմ անօրէնութիւնս չծածկեցի. ըսի թէ՝ Տէրոջը պիտի խոստովանիմ իմ յանցանքներս. ու դուն թողուցիր իմ մեղքիս անօրէնութիւնը: Սաղմ. ԼԲ. 5: Բաղ. Եզր. Ժ. 11: Յակ. Ա. 16: Ա Յովհ. Բ. 9:

Բ

24. Ի՞նչ է երկրորդ պատուիրանքը:

Դուն քեզի կուռք չշինես, ոչ ալ վերը երկինքի մէջ՝ կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը, անոնց երկրպագութիւն չընես, ու անոնք չպաշտես. ինչու որ ես քու Տէր Աստուածդ՝ նախանձոտ Աստուած եմ որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վրայ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն զիս. և կ'ողորմիմ անոնց մինչև հազար ազգը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն: Ելք. Ի. 4—6:

25. Ի՞նչ արգիլուած է երկրորդ պատուիրանքով:

Աւրեմն ձեր հոգիներուն աղէկ զգուշութիւն ըրէք. որովհետև այն օրը՝ որ Տէրը Քորեբ լեռը կրակին մէջէն ձեզի խօսեցաւ, բնաւ նմանութիւն մը չտեսաք: Բ Օրին. Դ. 15: Կարդա՛ 16—19:

Ուստի՝ որովհետև Աստուծոյ ցեղէն ենք, պէտք չէ որ անանկ սեպենք թէ Աստուածութիւնը նման ըլլայ ոսկիի կամ արծաթի կամ քարի, որ մարդուս վարպետութիւնովը ու խելքովը քանդակուած է: Գործ. ԺԷ. 29: Բաղ. Եսայ. Խ. 18:

26. Ի՞նչ ըսել Սրբէկէ Ռաֆաւորը:

Ասիկայ . . . արձանները կոտրտեց, և Մովսէսին շինած պղնձէ օձը կտոր կտոր ըրաւ, քանզի մինչև ան օրերը Իսրայէլի որդիքը անոր խունկ կը ծխէին, ու անիկայ Նեեսթան (այսինքն պղնձի կտոր) կոչեց։ Դ Թագ. ԺԸ. 4։

Գ

27. Ի՞նչ է երրորդ պատուիրանքը։

Տէրոջը քու Տէր Աստուծոյդ անունը պարապ տեղը բերանդ չառնես. ինչու որ Տէրը՝ իր անունը պարապ տեղը բերան առնողը՝ անմեղ պիտի չսեպէ։ Ելից Ի. 7։

28. Ի՞նչ կը սորվեցընէ երրորդ պատուիրանքը։

Իմ անունս պիտի փառաւորեն. Յակոբին Սուրբը պիտի փառաւորեն, ու Իսրայէլի Աստուծմէն պիտի վախնան։ Եսայ. ԻԹ. 23։ Քու անունդ Սուրբ ըլլայ։ Մատթ. Զ. 9։

29. Ի՞նչ արգիլուած է երրորդ պատուիրանքով։

Իմ անունովս սուտ տեղը երդում մի ընէք. ու ձեր Աստուծոյ անունը մի՛ պղծէք. ես եմ Տէրը։ Ղեւտ. ԺԹ. 12։ Եւ իմ սուրբ անունս պիտի չպղծէք, որ ես սրբուիմ Իսրայէլի որդւոցը մէջ։ Ղեւտ. ԻԲ. 32։ Բաղ. Եզեկ. ԼԹ. 7, և ԽԳ. 7։

30. Աւետարանը ի՞նչ կը սորվեցընէ երդում ընելու վրայով։

Բայց ամէն բանէն առաջ եղբայրներս երդում չընէք՛, ո՛չ երկինքի վրայ՝ ո՛չ երկրի վրայ, ո՛չ ալ մէկ ուրիշ երդում մը. հապա ձեր այոն՝ այո՛ ըլլայ, և ոչը՝ ո՛չ. որ չըլլայ թէ դատապարտութեան տակ իյնաք։ Յակ. Ե. 12։ Բաղ. Ե. 34—37։

Դ

31. Ի՞նչ է չորրորդ պատուիրանքը։

Հանգստութեան օրը միտքդ բեր՝ անիկայ սուրբ պահելու համար։ Վեց օր պիտի աշխատիս, ու բոլոր գործդ ընես. բայց եօթներորդ օրը՝ Տէրոջը քու Աստուծոյդ հանգստութեան օրն է. ան օրը գործ մը պիտի չգործես, ո՛չ դուն՝ ո՛չ քու որդիդ՝ ո՛չ քու աղջիկդ՝ ոչ քու ծառադ ու աղախինդ՝ ո՛չ քու անասունդ՝ ո՛չ ալ տանդ մէջ եղած օտարականդ. քանզի Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքը ու երկիրը՝ ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները, և եօթներորդ օրը հանգստացաւ. անոր համար Տէրը օրհնեց հանգըստութեան օրը՝ ու սրբեց զանիկայ։ Ելից Ի. 8—11։

32. Ի՞նչ կը սորվեցնէ չորրորդ պատուիրանքը։

Վեց օր պիտի գործես, ու եօթներորդ օրը հանգստանաս. թէ վարուցան ընելու և թէ հընձելու ատենը պիտի հանգստանաս։ Ելից ԼԴ. 21։ Բաղ. Ղևտ. ԻԶ. 2, և Ելից ԻԳ. 12։

33. Ի՞նչ արգիլուած է չորրորդ պատուիրանքով։

Եօթներորդ օրը... բնաւ գործ պիտի չգործէք. Տէրոջը շաբաթը պիտի ըլլայ ձեր բոլոր բնակութեանցը մէջ։ Ղևտ. ԻԳ. 3։ Ձեր անձերուն զգուշութիւն ըրէք, և շաբաթ օրը բեռ մի՛ վերցընէք, ու Երուսաղէմի դռներէն ներս մի՛ բերէք։ Երեմ. ԺԷ. 21։ Բաղ. ԺԷ. 22։

34. Ի՞նչ բան օրինաւոր կերպով կրնանք ընել հանգստութեան օրը։

Շաբաթ օրը բարի գործել արժան է։ Մատթ. ԺԲ. 12։ Կարդա .ԻԲ. 5, և Ղուկ. ԺԳ. 15 և ԺԴ. 5, և Յովհ. Է. 22։

35. Շաբաթը միայն Հրէաներո՞ւն համար է։

Շաբաթը մարդուն համար եղաւ, ու չէ թէ մարդը շաբաթին համար։ Ուրեմն Որդին մարդոյ

շաբաթին ալ Տէրն է։ Մարկ. Բ. 27, 28։ Բաղ. Մատթ. ԻԴ. 20։

36. Շաբթուան ո՞ր օրը Առաքեալները երկրպագութեան կը ժողվուէին։

Եւ մէկշաբթի օրը երբոր ժողվուեր էինք հաց կտրելու, Պօղոս անոնց կը քարոզէր, ինչու որ հետեւեալ օրը ճամբայ պիտի ելլէր։ Գործ. Ի. 7։ Բաղ. Յայտ. Ա. 10։ Ա Կորնթ. ԺԶ. 1, 2։

37. Ի՞նչ խոստմունք կայ շաբաթը պահողներուն։

Թէ որ շաբաթը՝ իմ սուրբ օրս՝ քու ցանկութիւնդ կատարելէն ոտքդ դարձընես, ու շաբաթը քու զուարճութիւնդ, և Տէրոջը նուիրուած օրը՝ պատուական անուանես, ու զանիկայ պատուես, քու ճամբաներուդ չհետեւելով, քու ցանկութիւնդ չկատարելով, ու պարապ խօսք չխօսելով, ան ատենը Տէրոջմով պիտի ուրախանաս. և քեզ երկրիս բարձր տեղուանքը պիտի հանեմ։ Եսայ. ԾԸ. 13, 14։ Բաղ. ԾԶ. 2–7, և Երեմ. ԺԷ. 24, 25։

Ե

38. Ի՞նչ է հինգերորդ պատուիրանքը։

Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ, որ քու օրերդ երկար ըլլան ան երկրին վրայ՝ որն որ քու Տէր Աստուածդ կուտայ քեզի։ Ելից Ի. 12։

39. Ի՞նչ կը սորվեցնէ հինգերորդ պատուիրանքը։

Ձեր ամէն մէկը իր մօրմէն ու իր հօրմէն պիտի վախնայ, և իմ շաբաթներս պիտի պահէք. ես եմ Տէրը ձեր Աստուածը։ Ղեւտ. ԺԹ. 3։ Բաղ. Առակ. Ա. 8, 9։

40. Ի՞նչ սպառնալիք եղած է հնազանդ չեղողներուն։

Ան աչքը՝ որ իր հայրը ծաղր կ՚ընէ, և իր մօրը հնազանդելը կ՚անարգէ, ձորերուն ագռաւ-

նները պիտի փորեն, ու զանիկայ արծիւներուն ձագերը պիտի ուտեն։ Առակ. Լ. 17։ Ով որ իր հայրը ու մայրը կ՚անիծէ, անոր ճրագը մութ խաւարի մէջ պիտի մարի։ Առակ. Ի. 20։ Բաղ. Բ Օրէն. ԻԱ. 18—21։ Ղեւտ. Ի. 9, և Եսայ. ԽԵ. 10։

**41. Ի՞նչ է Աստուծոյն խոստմունքը աս պատուիրանքին վրայ։**

Որդիք՝ ձեր ծնողացը հնազանդ եղէք Տէրոջմով, որ ան է արժանը։ Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ, որ առջի պատուիրանքն է խոստմունքով, որ քեզի աղէկ ըլլայ, ու երկար կեանք ունենաս երկրի վրայ։ Եփես. Զ. 1—3։ Բաղ. Կող. Գ. 20։

**42. Ի՞նչ է ծնողներուն պարտքը։**

Բանի որ յոյս կայ՝ տղադ խրատէ՛, և անոր աղաղակին ականջ մի՛ դներ։ Առակ. ԺԹ. 18։ Գաւազանին խնայողը իր որդին կ՚ատէ. բայց զանիկայ սիրողը կանուխկէկ կը խրատէ։ Առակ. ԺԳ. 24։ Բաղ. ԻԳ. 13, 14։ ԻԹ. 15. 17։ Եբր. ԺԲ. 9—10։

**43. Ի՞նչպէս վարուելու են ծնողները իրենց զաւակներուն հետ։**

Եւ դուք հայրեր՝ ձեր որդիները մի՛ բարկացընէք. հապա անոնք մեծցուցէք Տէրոջը վարժութիւնովը ու խրատովը։ Եփես. Զ. 4։ Հայրեր՝ ձեր որդիները մի՛ բարկացընէք, որ չվհատին։ Կող. Գ. 21։

**44. Ծնողները իրենց զաւակները կրթելո՞ւ են։**

Եւ աս խօսքերը՝ որ ես այսօր քեզի պատուիրեցի, քու սրտիդ մէջը ըլլան։ Եւ անոնք քու որդւոցդ կրկին և կրկին անգամ սորվեցընես, և թէ՛ տանդ մէջ նստած ատենդ, թէ ճամբայ գացած ատենդ

և թէ պառկելու ու ելլելու ատենդ անոնց վրայ խօսիս։ Բ Օրէն. Զ. 6, 7։ Բաղ. Դ. 9, 10 և ԺԱ. 18, 19։

45. Ո՞Վ պէտք զաւակներուն հոգ տանի։

Որովհետև որդիները պարտաւոր չեն ծնողքներուն համար բան դիզել, հապա ծնողքները՝ որդիներուն համար։ Բ Կորնթ. ԺԲ. 14։ Թէ որ մէկը իրեններուն՝ ու մանաւանդ իր ընտանեացը հոգ չտանիր, անիկայ հաւատքը ուրացած է, ու անհաւատէ մըն ալ գէշ է։ Ա Տիմ. Ե. 8։

46. Ի՞նչ է ծառաներուն պարտքը։

Ծա՛ռաներ՝ հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերուն ահով ու դողով՝ ձեր սրտին միամտութիւնովը, որպէս թէ Քրիստոսին. չէ թէ մարդահաճոյի պէս աչքի առջև ծառայելով, հապա Քրիստոսի ծառաներու պէս՝ սրտանց Աստուծոյ կամքը ընելով. յօժարութեամբ ծառայելով՝ որպէս թէ Տէրոջը, ու չէ թէ մարդոց։ Եփես. Զ. 5—7։ Բաղ. Կող. Գ. 22։ Ա Տիմ. Զ. 1, 2։ Տիտ. Բ. 9, 10։

47. Ի՞նչ է տէրերուն պարտքը։

Տէրեր՝ ձեր ծառաներուն իրաւունք ու հաւասարութիւն տուէք, գիտնալով որ դուք ալ Տէր ունիք երկինքը։ Կող. Դ. 1։ Բաղ. Եփես. Զ. 9։ Խստութեամբ պիտի չիշխես անոր վրայ, հապա քու Աստուծմէդ վախնաս։ Ղևտ. ԻԵ. 43։ Վա՜յ անոր՝ որ իր տունը զրկանքով, ու իր վերնատունները անիրաւութեամբ կը շինէ. իր դրացին ձրի կը բանեցընէ, և անոր աշխատութեանը վարձքը չվճարեր։ Երեմ. ԻԲ. 13։ Բաղ. Մաղ. Գ. 5, և Բ Օրէն. ԻԴ. 14, 15։

48. Մեր պարտքը ի՞նչ է կառավարութեանը։

Ամէն մարդ իր վրան եղած իշխանութիւննե-

րուն Թո՛ղ հնազանդի ... ուստի հատուցէ՛ք պէտք եղածը ամենուն. որուն որ տուրք տրուելու է՝ տուրքը, որուն որ մաքս՝ մաքսը, որուն որ վախ՝ վախնալը, որուն որ պատիւ՝ պատիւը։ Հռովմ. ԺԳ. 1. 7։ Կարդա նաև ԺԲ. 19 էն ԺԳ. 8։

Զ

49. Ի՞նչ է վեցերորդ պատուիրանը։

Սպանութիւն մի՛ ըներ։ Ելից Ի. 13։

50. Սպանութեան պատիժը ի՞նչ է։

Ո՛վ որ մարդու արիւն կը թափէ, իր արիւնն ալ մարդէ պիտի թափուի։ Ծննդ. Թ. 6։ Թէ որ մէկը իր դրացիին ոխ ունենայ, և զանիկայ նենգութեամբ մեռցընէ, իմ սեղանէս ալ պիտի առնես զանիկայ որ մեռնի։ Ելից ԻԱ. 14։ Մահապարտ սպաննողին կենացը համար փրկանք չառնէք, որպէս զի անիկայ իր քաղաքը դառնայ նստի՝ քահանայապետին մահէն առաջ։ Թուոց ԼԵ. 31։ Բաղ. ԼԵ. 15—21։ Բ Օրին. ԺԹ. 11—13, և Առակ. ԻԸ. 17։

51. Ի՞նչ է Քրիստոսի բացատրութիւնը աս պատուիրանքին վրայով։

Բայց ես ձեզի կ՚ըսեմ, ո՛վ որ իր եղբօրը պարապ տեղը սրդողի, դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ։ Մատթ. Ե. 22։

52. Ի՞նչ աւելցուցած են Առաքեալները։

Ամէն ո՛վ որ իր եղբայրը կ՚ատէ, մարդասպան է. ու գիտէք որ ամէն մարդասպան իր մէջը բնակած յաւիտենական կեանք չունի։ Ա Յովհ. Գ. 15։ Բայց հիմա մէկդի՛ ձգեցէք դուք ալ ան ամէնը, բարկութիւնը, սրտմտութիւնը, չարութիւնը, հայհոյութիւնը, անհամեստ խօսքերը ձեր բերաններէն։ Կող. Գ. 8։ Բաղ. Եփես. Դ. 31, 32։ Ե. 1, 2։ Ա Պետ. Գ. 9։

53. Ի՞նչ է Քրիստոնէական կենցաղավարութեան օրէնքը։

Իրարու համբերելով և իրարու ներելով՝ թէ որ մէկը մէկու մը դէմ տրտունջ մը ունենայ. ինչպէս որ Քրիստոս ձեզի ներեց, անանկ ալ դուք։ Կող. Գ. 13։ Բաղ. Եփես. Դ. 1—3։

Է

54. Ի՞նչ է եօթներորդ պատուիրանքը։

Շնութիւն մի՛ ըներ։ Ելից. Ի. 14։

55. Ի՞նչ է Քրիստոսի ճշմարտութիւնը աս պատուիրանքին վրայ։

Բայց ես ձեզի կ՚ըսեմ. Ով որ կնիկ մարդու կը նայի անոր ցանկանալու համար, ալ անիկայ իր սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր հետ։ Մատթ. Ե. 28։ Բաղ. Առակ. Զ. 24—35։

56. Ի՞նչ կ՚աւելցնէ Առաքեալը։

Բայց պոռնկութեան և ամէն կերպ պղծութեան՝ կամ ագահութեան անունը անգամ չըյիշուի՛ ձեր մէջը, ինչպէս որ կը վայլէ սուրբերուն, և գարշելի բաներ՝ կամ յիմարական խօսքեր՝ կամ խեղկատակութիւն, որ չվայլեր. այլ մանաւանդ գոհութիւն. աս իմանալով գիտնաք, որ ամէն պոռնիկ՝ կամ պիղծ՝ կամ ագահ՝ որ կռապաշտ է, Քրիստոսի և Աստուծոյ թագաւորութեանը մէջ ժառանգութիւն չունի։ Եփես. Ե. 3—5։ Բաղ. Ա Կորնթ. Զ. 9, 10. 18։ Կող. Գ. 5։ Յայտ. ԻԱ. 8։ Ա Թեսս. Դ. 3—5, 7։

57. Ի՞նչ բռնած է ամուսնութեան վրայով։

Ու Տէր Աստուած ըսաւ. Աղէկ չէ որ Ադամը (կամ մարդը) մինակ ըլլայ. անոր օգնական մը ընեմ իրեն յարմար։ Ծննդ. Բ. 18։ Առաքինի կնիկ գտնողը՝ բարիք կը գտնէ, ու Տէրոջմէ

շնորհք մը կը ստանայ։ Առակ. ԺԸ. 22։ Ամուսնութիւնը բոլորովին պատուական է, ու անկողինը անարատ է։ Եբր. ԺԳ. 4։ Պէտք է Եպիսկոպոսին անարատ ըլլալ, մէկ կնկան մը էրիկ։ Ա Տիմ. Գ. 2։ Բաղ. Ե. 14։ Ա Կորն. Է. 2—5։ Մարկ. Ժ. 6—12։

58. Ի՞նչ պարտք ունի էրիկը իր կնկանը։

Էրիկներ՝ սիրեցէ՛ք ձեր կնիկները, ինչպէս որ Քրիստոս ալ սիրեց եկեղեցին, ու իր անձը մատնեց անոր համար։ Եփես. Ե. 25։ Նոյնպէս ալ պէտք է որ էրիկները իրենց կնիկները սիրեն՝ իրենց մարմիններուն պէս. ան որ իր կինը կը սիրէ՝ իր անձը կը սիրէ։ Ե. 28։ Ձեզմէ ամէն մէկն ալ իր կնիկը անանկ սիրէ՝ որպէս թէ իր անձը։ Ե. 33։ Բաղ. Կող. Գ. 19։ Ա Պետ. Գ. 7։

59. Ի՞նչ պարտք ունի կնիկը իր էրկանը։

Կնիկները իրենց էրիկներուն հնազանդ ըլլան՝ որպէս թէ Տէրոջը. ինչու որ էրիկը կնկանը գլուխն է, ինչպէս որ Քրիստոս ալ եկեղեցիին գլուխն է։ Եփես. Ե. 22, 23։ Ու կնիկը իր էրիկէն թո՛ղ վախնայ։ Ե. 23։ Բաղ. Կող. Գ. 18։ Տիտ. Բ. 4, 5։ Ա Պետ. Գ. 1—6։ Առակ. ԼԱ. 10—31, և ԻԱ. 9. 19։

60. Կնիկը արձակելը օրինաւո՞ր է։

Ո՛վ որ առանց պոռնկութեան պատճառի իր կնիկը արձակէ՝ և ուրիշ մը առնէ, շնութիւն կ՚ընէ. և ո՛վ որ արձակուածը առնէ՝ շնութիւն կ՚ընէ։ Մատթ. ԺԹ. 9։ Բաղ. Ե. 32, և Մարկ. Ժ. 11, 12։

## Ը

61. Ի՞նչ է ութերորդ պատուիրանքը։

Գողութիւն մի՛ ըներ։ Ելից. Ի. 15։

62. Ի՞նչ կը արգիլէ ութերորդ պատուիրանքը։

Բնաւ մէկուն պարտական մի՛ գտնուիք, միայն թէ մէկզմէկ սիրելու: Հռովմ. ԺԳ. 8: Ո՛չ միայն Տէրոջը առջեւը, հապա մարդոց առջեւն ալ բարի բաներ ընելու հոգ կը տանինք: Բ Կորնթ. Ը. 21: Բաղ. Հռովմ. ԺԲ. 17: Ա Պետ. Բ. 12:

63. Ի՞նչ կ'ըսէ Առաքեալը աշխատութեան համար:

Ան որ գողութիւն կ'ընէր, ալ թո՛ղ չգողնայ. այլ մանաւանդ աղէկ գործի մը պարապելով՝ իր ձեռքերովը աշխատի, որ կարող ըլլայ տալ կարօտեալին: Եփես. Դ. 28: Կ'աղաչենք ձեզի եղբայրներ... ջանք ըրէք որ հանդարտ կենաք. ու ամէն մէկերնիդ իր գործը գործէ, ու ձեր ձեռքերովը աշխատիք, ինչպէս որ ձեզի պատուիրեցինք: Ա Թես. Դ. 10, 11: Ան որ չուզեր գործ գործել, հաց ալ թո՛ղ չուտէ: Բ Թես. Գ. 10: Բաղ. Գ. 12: Ծննդ. Գ. 19:

64. Ի՞նչ մը գողութեան յարակից յանցանք-ուած է:

Աղքատը մի՛ կողոպտեր իր աղքատութեանը համար, ու տնանկը դատաստանի մէջ մի՛ կոխեր: Առակ. ԻԲ. 22: Իր ստացուածքը շատցնելու համար աղքատին զրկանք ընողը, ու հարուստին տուողը՝ անշուշտ կարօտութեան կը հասնի: ԻԲ. 16: Բաղ. Յակ. Ե. 1—4:

65. Ի՞նչ ըսուած է խաբէութեան վրայով:

Մախաղիդ մէջ տեսակ տեսակ մեծ ու պզտիկ կշիռքի քարեր չըլլայ: Տանդ մէջ տեսակ տեսակ մեծ ու պզտիկ արդուներ չըլլայ: Բ Օրէն. ԻԵ. 13, 14: Բաղ. Ղեւտ. ԺԹ. 35, 36: Առակ. ԺԱ. 1: ԺԶ. 11: Ի. 10. 23:

Թ

66. Ի՞նչ է իններորդ պատուիրանը:

«Քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի՛ ը-

ներ։ Եփես. Ե. 16։

67. Ի՞նչ կը սորվեցնէ իններորդ պատուիրանքը։

Սուտ լուր պէտք չտարածես. անօրէնի հետ ձեռքդ պէտք չդնես անիրաւ վկայ ըլլալով։ Ելից. ԻԳ. 1։ Քու ժողովուրդիդ մէջը չարախօսութիւն ընելու չպտըտիս. քու ընկերիդ արիւնը մտնելու պատճառ չըլլաս։ Ղեւտ. ԺԹ. 16։ Բաղ. Բ Օրէն. ԺԹ. 16—21։ Առակ. ԻԴ. 28։

68. Սուտ խօսելու թոյլտուութիւն կա՞յ։

Ուստի ստութիւնը մէկդի ձգելով, ճշմարտութիւն խօսեցէք ամէն մէկերնիդ իր ընկերին հետ. ինչու որ մենք իրարու անդամներ ենք։ Եփես. Դ. 25։ Իրարու սուտ մի՛ զրուցէք. հին մարդը իր գործքերովը ձեր վրայէն հանեցէ՛ք։ Կող. Գ. 9։ Եւ բոլոր ստախօսներուն բաժինը՝ կրակով ու ծծումբով վառած լիճին մէջը պիտի ըլլայ, որ է երկրորդ մահը։ Յայտ. ԻԱ. 8։ Բաղ. Առակ. ԺԲ. 22։

69. Ի՞նչ ըսուած է հետաքրքիր պարապաշրջիկներուն վրայով։

Ձեր մէջէն ոմանք անկարգութեամբ կը վարուին, ու գործ մը չեն գործեր, հապա հետաքրքիր կը պտըտին։ Անանկներուն պատուէր կուտանք, ու կ'աղաչենք մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որ հանդարտութեամբ գործեն, և իրենց հացը ուտեն։ Բ Թես. Գ. 11, 12։ Բաղ. Ա Տիմ, Գ. 11։ և Ե. 11—14։

Ժ

70. Ի՞նչ է տասներորդ պատուիրանքը։

Քու դրացիիդ տանը մի՛ ցանկար. քու դրացիիդ կնկանը՝ կամ անոր ծառային՝ կամ անոր աղախինին՝ կամ անոր եզին՝ կամ անոր իշուն՝ և կամ դրացիիդ ամենևին մէկ բանին մի՛ ցանկար։

Ելից Ի. 17։

71. Ի՞նչ կը սորվեցընէ տասներորդ պատուիրանը։

Բարքերնիդ արծաթասէր չըլլայ, բաւական սեպեցէք որչափ բան որ ձեռքերնիդ կայ, ինչու որ ինքը զրուցեց՝ Թէ բնաւ քեզ պիտի չթողում, ու բնաւ քեզ երեսէ պիտի չձգեմ։ Եբր. ԺԳ. 5։ Կերակուր ու հանդերձ ունենալով, անոնցմով բաւականանանք։ Ա Տիմ. Զ. 8։

72. Ի՞նչ արգիլուած է տասներորդ պատուիրանաւ։

Նայեցէք և զգուշացէք ագահութենէն. ինչու որ մարդուս ստացուածքներուն աւելնալէն կախուած չէ իր կեանքը։ Ղուկ. ԺԲ. 15։ Բայց անոնք որ հարստանալ կ'ուզեն, կ'իյնան փորձութեան ու որոգայթի՝ և շատ յիմարական ու վնասակար ցանկութիւններու մէջ, որոնք սատակումի ու կորստեան մէջ կ'ընկղմեն մարդիկը։ Ինչու որ ամէն չարութիւններուն արմատը արծաթսիրութիւնն է. որուն մէկ քանիները անձնանուէր ըլլալով՝ հաւատքէն մոլորեցան, ու ինքզինքնին շատ ցաւերու մէջ ձգեցին։ Ա Տիմ. Զ. 9, 10։ Բաղ. Մրկ. ԺԵ. 27։ Յոբ. 11։

73 Ինչո՞վ փառաւորելու ենք մեր Աստուածը։

Տէրոջը պատիւ ըրէ քու ստացուածքէդ, և քու բոլոր բերքերուդ երախայրիներէն, և քու շտեմարաններդ առատութեամբ պիտի լեցուին, ու հնձաններէդ նոր գինին դուրս պիտի թափի։ Առակ. Գ. 9, 10։ Ուստի տնտեսներուն մէջ կը փնտռուի, որ մէկը հաւատարիմ գտնուի։ Ա Կորնթ. Դ. 2։ Բաղ. Ա Պետ. Դ. 10։

74. Ի՞նչ խոստմունք եղած է բարերարութեան ընողէն։

Տուէ՛ք՝ ու ձեզի պիտի տրուի. աղէկ չափով՝ կոխուած՝ ցնցուած՝ լեփ լեցուն պիտի տրուի ձեր

գոգը։ Ղուկ. Զ. 38։ Ազնուաբարոյ մարդը՝ ազնիւ բաներ կը խորհի, ու ազնիւ բաներու վրայ հաստատ կը մնայ։ Եսայ. ԼԲ. 8։ Մարդ կայ որ իր ստացուածքը ցրուելով՝ կ'աւելցընէ, ու մարդ կայ որ չափէ դուրս կը խնայէ, բայց կարօտութեան կը հասնի։ Առակ. ԺԱ. 24։ Տես. ԺԱ. 25։ Բաղ. Մաղ. Գ. 10։ Բ Կորնթ. Թ. 6—15։

75. Հիւրասիրութիւնը պարտք մըն է,

Իրարու հիւրասիրութիւն ցուցուցէք առանց տրտունջ ընելու։ Ա Պետ. Դ. 9։ Հիւրասիրութիւնը՝ մի՛ մոռնաք. ինչու որ անով ոմանք հրեշտակներ ընդունեցին չգիտնալով։ Եբր. ԺԳ, 2։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

76. Ի՞նչ է տասը պատուիրաններուն բովանդակութիւնը։

Յիսուս ըսաւ անոր. Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ և քու բոլոր անձովդ ու քու բոլոր մտքովդ. աս է առաջին ու մեծ պատուիրանքը։ Ու երկրորդը ասոր նման՝ քու ընկերդ սիրես քու անձիդ պէս։ Աս երկու պատուիրանքէս կախուած են բոլոր օրէնքը և մարգարէները։ Մատթ. ԻԲ. 37—40։ Բաղ. Հռով. ԺԳ. 9, 10։

77. Ի՞նչ է ՆՈՐ պատուիրանքը։

Նոր պատուիրան մը կու տամ ձեզի՝ որ դուք ալ մէկզմէկ սիրէք, ինտոր որ ես ձեզ սիրեցի, որ

դուք ալ մէկզմէկ սիրէք: Ասով ամէնը պիտի գիտնան՝ թէ իմ աշակերտներս էք, թէ որ իրարու վրայ սէր ունենաք: Յովհ. ԺԳ. 34, 35:

78. Ինչ է մեր պարտքը դէպ ի մեր թշնամիները:

Բայց ես ձեզի կ'ըսեմ. սիրեցէ՛ք ձեր թշնամիները. օրհնեցէ՛ք ձեզ անիծողները. բարի՛ ըրէք անոնց՝ որ ձեզ կ'ատեն, և աղօթք ըրէ՛ք անոնց համար՝ որ ձեզ կը չարչրկեն ու կը հալածեն: Մատթ. Ե. 44. Ղուկ. Զ. 27—35:

79. Ինչ է ոսկեղէն կանոնը:

Ուստի ամէն ինչ որ կ'ուզէք՝ որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց անանկ ըրէք. քանզի աս է օրէնքը ու մարգարէները: Մատթ. Է. 12:

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻՆ

# ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Սուրբ գիրքերը ինչպէ՞ս բաժնուած են:

Հին և Նոր Կտակարաններու: Առջինը Քրիստոսի գալէն առաջ ու ետքինը անոր գալէն ետև:

2. Քանի՞ գիրք կայ Հին Կտակարանին մէջ:

Երեսունըինը:

3. Քանի՞ գիրք կայ Նոր Կտակարանին մէջ:

Քսանըեօթը:

4. Քանի՞ գիրք կայ բոլոր Աստուածաշունչին մէջ:

Վաթսունուվեց :

5 . Հին Կտակարանին մէջ գիրքերը ի՞նչ կարգով են :

*Առաջինը պատմական գիրքերն են . Երկրորդը խրատն գիրքերը , ու վերջինը մարգարէական գիրքերը :*

6 . Որո՞նք են Հին Կտակարանին պատմական գիրքերը :

*Հնգամատեանը , կամ Մովսէսին Հինգ Գիրքերը , Գիրք Յեսուայ , Դատաւորաց , Հռութայ , Ա . Բ . Գ . Դ . Թագաւորաց , Ա . Բ . Մնացորդաց . Եզրասայ , Նեեմիայ և Եսթերայ : 17 գիրք :*

7 . Պատմական գիրքերը ի՞նչ կարգով են :

*Որչափ որ կարելի է ժամանակին կարգովը :*

8 . Որո՞նք են Հին Կտակարանին խրատն գիրքերը :

*Մեծ մասով բանաստեղծական են . որոնք են , Գիրք Յոբայ , Սաղմոսաց , Առակաց , Ժողովողի , և Երգ երգոց : 5 գիրք :*

9 . Աս գիրքերը ի՞նչ կարգով են :

*Մեծ մասով ժամանակին կարգովը :*

10 . Որո՞նք են Հին Կտակարանին մարգարէական գիրքերը :

*Չորս մեծագոյն մարգարէութիւնները՝ Եսայեայ , Երեմիայ , Եզեկիէլի , Դանիէլի . և տասներկու փոքրագոյն մարգարէութիւնները : 16 գիրք :*

11 . Նոր Կտակարանին գիրքերը ի՞նչ կարգով են :

*Առաջինը պատմական գիրքերը , երկրորդը թուղթերը , և վերջինը մարգարէականը :*

12 . Որո՞նք են Նոր Կտակարանին պատմական գիրքերը :

*Աւետարան ըստ Մատթէոսի , Մարկոսի , Ղու-*

կասու, Յովհաննու և Գործք Առաքելոց:

13. Թուղթերը որո՞նց գրածն են:

Տասնուչորսը Պօղոս Առաքեալին, մէկը Յակոբու, երկուքը Պետրոսի, երեքը Յովհաննու և մէկը Յուդայի: 21:

14. Պօղոսի Թուղթերը ի՞նչ կարգով են:

Առաջինը, ինը Թուղթ տեղական Եկեղեցիներու, անոնց երկայնութեանը նայելով կարգի դրուած, առանց նկատելու Թուականը: Երկրորդը, չորս Թուղթ անհատ անձերու, որոնք նաև երկայնութեանը նայելով կարգի դրուած, և վերջինը՝ Թուղթ առ Եբրայեցիս:

15. Պօղոսի Թուղթերուն անունները ի՞նչ են:

Թուղթ առ Հռովմայեցիս, առ Կորնթացիս Ա. Բ. Գաղատացիս, Եփեսացիս, Փիլիպպեցիս, Կողոսացիս, Թեսաղոնիկեցիս Ա. Բ. Ինը Թուղթ տեղական Եկեղեցիներու: Առ Տիմոթէոս Ա. Բ. Տիտոս, Փիլիմոն. Չորս Թուղթ անհատ անձերու, և Առ Եբրայեցիս:

16. Ո՞րն է Նոր Կտակարանին մարգարէական գիրքը:

Յայտնութիւն Յովհաննու:

17. Քանի՞ հոգի են Հին Կտակարանին գիրքերը գրողները:

Քառասունէն աւելի:

18. Նոր Կտակարանին գիրքերը գրողները քանի՞ են:

Ութը:

19. Հին Կտակարանին հեղինակն գրուելուն մէջ ո՞րչափ ատեն անցեր է:

Հազար հարիւր տարիէն պակաս չէ:

20. Նոր Կտակարանինը ո՞րչափ:

Քառասուն տարիի չափ:

21. Հին Կտակարանը ի՞նչ լեզուով գրուեցաւ:

*Եբրայական։*

22. Նոր Կտակարանը ի՞նչ լեզուով գրուեցաւ։

*Յունական։*

## ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

23. Ադամին ստեղծուելէն մինչեւ Քրիստոսի ծնունդը քանի՞ տարի է։

4000, *կամ մինչեւ փրկչի թուականը* 4004։

24. Ադամէն մինչեւ Քրիստոս եղած ժամանակին մէջտեղը ի՞նչ երեւելի դէպք պատահեցաւ։

*Աբրահամին ծնունդը.* (*Նախ քան Քրիստոս* 1996։)

25. Աբրահամին ու Քրիստոսի ծնունդին մէջ տեղը ի՞նչ դէպք պատահեցաւ։

*Սողոմոնի տաճարին նաւակատիքը.* (Ն. Ք. 1004։)

26. Սողոմոնեան տաճարին նաւակատիքէն ու Քրիստոսի ծնունդին մէջտեղը ի՞նչ դէպք պատահեցաւ։

*Երկրորդ տաճարին նաւակատիքը.* (Ն. Ք. 515։)

27. Աբրահամին ու Սողոմոնին մէջտեղը ի՞նչ պատահեցաւ։

*Եգիպտոսէն ազատութիւնը Մովսէսին ձեռամբ.* (Ն. Ք. 1491։)

28. Ջրհեղեղը ո՞ր տարին եղաւ։

*Յամի Աշխարհի* 1656. (Ն. Ք. 2348։)

29. Ի՞նչ դէպք պատահեցաւ Ադամին ու Աբրահամին մէջտեղը։

*Ենովքին փոխադրուիլը.* (Ն. Ք. 3017

կամ, Յամի Աշխարհի 987։)

30. *Ի՞նչ դէպքեր են որ աշխարհիս Քրիստոսէ առաջ եղած պատմութիւնը բաժնելով, հինգ հինգ հարիւր տարիներու մէջէն կը կազմեն։*

Երկրորդ տաճարին նաւակատիքը, Սողոմոնի տաճարին նաւակատիքը, Եգիպտոսէն ելքը Իսրայելացւոց, Աբրահամի ծնունդը, Ջրհեղեղը, Ենովքի փոխադրուիլը, անոր հօրը Յարեդին ծնունդը, Ադամին ստեղծուիլը։

*Ծանօթութիւն.* Աս թուականները՝ որոնք գործածութեան բաւական են, Աստուածաշունչին ընդունուած ժամանակագրութենէն առնուած են, առանց՝ վէճի տակ եղած նախնի ժամանակագրութեան խնդիրները յարուցանելու։

Ա. Տ. Ե Ն. Ք. համառօտութիւնները Քրիստոսի ծնունդէն 4 տարի ետև թուականի մը կը վերաբերին։ Քրիստոսի ծնունդը թուական բռնելու դարագլուխի մը պէս գործածուած չէր մինչև փրկչի 525 թուականին։ Ասկէ ծագած է 4 տարուան տարբերութիւնը։

ՎԵՐՋ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР

1595

1543